

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն Խմբագրատան մէջ:

(Ստորագրաբացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նաղի կիրակի և առն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները:—Ներքին տե-
սուծիւն: Նամակ համախոս: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-
ծիւն: Գերմանիա: Իտալիա: Արտաքին լուրեր:—
Խառն լուրեր:—«Մշակի» հեռագիրներ:—Հայ-
տարարութիւններ:—Բանասիրական: Տեղեկա-
գիր առ անդրական հիւպատոս:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԲ- ՆԵՐ

Վերջին ժամանակները Գեր-
մանիան սաստիկ զբաղված է
հրէաների խնդրով:

Հայտնի է որ գերմանական
հրէաների դէմ գլխաւորապէս ձայն
բարձրացնողը պրոֆէսոր Տրէյչէն
է: Դրա գլխաւոր դատողու-
թիւնները հրէաների դէմ հետե-
ւեալներն են: Սպանիական հրէա-
ները, ասում է գերմանացի պրո-
ֆէսորը, մաքուր ցեղ են և ունեն
իրանց փառաւոր անցեալը, նրանք
տալիս են մի ազնիւ կոնտինգէնտ
Սպանիային, Իտալիային և Ֆրան-
սիային, իսկ մենք, գերմանացիներս,
աւելացնում է Տրէյչէն, դժբաղ-
դութիւն ունեցանք ընդունել մեր
հայրենիքի մէջ հրէաների ամենա-
փչացած ցեղը, այն է Լեհաստա-
նի հրէաներին, որոնց բարոյական
յատկութիւնները ապականվեցան
հին Լեհաստանի ճշման տակ:
Իացի սորանից գերմանացի պատ-

մարանը բողբոլում է Գերմանիա-
յում գետեղված հրէաների ահա-
զին թւի դէմ: Միայն Բերլի-
նում հրէաների թիւը նոյն-
քան մեծ է, որքան ամբողջ Գը-
րանիայում: Լեհ հրէաների դէմ
բարձած գլխաւոր մեղադրանքները
որ հրէաները չեն պարապում ոչ
երկրագործութեամբ, ոչ ձեռա-
րուեստներով, որ նրանք մեծ մասամբ
աղաւաղված կազմուածք ունենով,
կարողանում են գրեթէ միշտ ա-
զատվել զինուորական ծառայու-
թիւնից, որ նրանք հարստահա-
րում են քրիստոնեաներին և դի-
զում են իրանց մօտ փողեր, որ
նրանք միշտ օտար են մնում այն
երկրին, նրա բարք ու վարքերին,
որտեղ ապրում են:

Տրէյչէն և հրէաների թշա-
միները մեղադրում են նրանց
վերջին ժամանակների Գերմա-
նիայում պատահած ահագին սնան-
կութիւնների և բոսային փտան-
գաւոր խաղերի վերաբերութեամբ:
Գերմանացի պատմաբանը սարսա-
փում է մտածելով որ Գերմա-
նիայի ամբողջ հասարակական կար-
ծիքը հրէաների ձեռքում է, որով-
հետեւ գերմանական լրագրութեան
մեծ մասը նրանց ձեռքում է:

Հրէաների դէմ յայտնած այդ
զրականական պատերազմը յա-
րուցեց բազմաթիւ գրուածներ:

Կրքեր, բրոշուրներ և լրագրական
յօդուածներ, որոնք պատասխա-
ներով Տրէյչէնին և նրա պէս-
ներին, հրէաների պաշտպան են
հանդիսանում:

Եթէ հրէան ձեռագործներով
և երկրագործութեամբ չէ պարա-
պում, ասում են պաշտպանները,
այդ այն պատճառով է, որ դա-
րերով այդ պարապմունքները նը-
րան արգելված էին Գերմանիա-
յում: Եթէ նրա կազմուածքը մեծ
մասամբ աղաւաղված է, այդ այն
պատճառով է, որ երկար ժամա-
նակ օրէնքով նրան թոյլ տուած
պարապմունքները ստիպում էին
նրան նստողական կեանք վարել:
Նա կարող էր միայն փաճառական
կամ զարափ լինել, աւելի ոչինչ:
Եթէ վերջապէս, գերմանական
ամբողջ մամուլը հրէայի ձեռքում
է, այդ այն պատճառով է, որ
կրթված, ինտելեկտիւային պատ-
կանող հրէային դարերով միջոց
չէր տրվում ոչ պետական ծառա-
յութեան մէջ մտնել, ոչ ուսում:
Նական կամ այլ պաշտօնական
ասպարէզ ընդունել:

Բազմաթիւ պատասխանների
մէջ, հրէաների արժանաւորու-
թիւնները ցոյց տալու համար,
բերված են այնպիսի պատմական
անուններ, որոնցով ամեն ցեղ

կարող էր պարծենալ: Թող, ա-
սում են պաշտպանները, չը մոռա-
նան այնպիսի անուններ, ինչպէս
Մէնդէլսոն, Մէյքերէր, Սպինո-
զա, Հէյնէ և շատ ուրիշներ:

Իաց հրէաների թշնամիներին
տուած պատասխանների մէջ ա-
մենանշանաւորն է, մեր կարծի-
քով մի անանուն բրոշուրի մէջ
յայտնված միտքը: «Հրէաները,
ասում է անցյալ հեղինակը, մա-
սամբ իրանք են մեղաւոր, որ նը-
րանց այսքան արհամարհում են,
նրանք չունեն բաւական կամքի
հաստատութիւն, նրանք պէտք է
սովորեն իրանք իրանց անձը ա-
ւելի պատել, արժանաւորու-
թեամբ պահել իրանց այն անձ-
ների առջև, որոնք միշտ պատ-
րաստ են ոտնակոխ անել նրանց»:
Հրէաները, ասում է վերջապէս
հեղինակը, չը պէտք է ակնածեն
ուրիշներից, այլ պէտք է աշխա-
տեն իրանց այնպէս պահել, որ
ուրիշները ակնածեն նրանցից:

Եւ այդ ամբողջ կատաղի բա-
նակուի մէջ հրէաների խնդրի վե-
րաբերութեամբ լրագիրները շատ
թոյլ կերպով են լսել տալիս ի-
րանց ձայնը:

Բանակուի մեծ մասը լինում
է գրքերի ու բրոշուրների մէջ ու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՌԱՅԻՒՆԱԿԱՆ ՀԻՊՈՏՈՍ

ԿԱՐՆՈՑ ՊԱՐՈՆ ԹՐՈԹԹԵՐ

(Ծարունակութիւն և վերջ)

Հարստահարեալ հայք որոն կրնան ուղղել իրենց
զանգաւանքը:—Ստիպեալ երկրին կառավարու-
թեանը Սակայն ստուգուած իրողութիւն մ'է որ
երբ մի խումբ հարստահարէ կամ սպանի մի հայ,
տեղական վարչութիւնը նոյն յանցանքը թեթեւ-
նող պարագայներ մէջ բերելով, կը վարանի ոճա-
գործ խալամը դատաւարտելու, կամ կը դիմանի
նրան կէս պատիժ տալ, կամ զայն կարճակէ յա-
ճախակի. բայց երբ զոճը մի խումբ է, ոճ այն
ատեն վարչութիւնը վայրագ կը դառնայ և առի-
թէն օգուտ կը քաղէ քրիստոնեաները հարստա-
հարելու և խիստ մեծ մի տուգանքի դատաւար-
տելու:

Ինչպէս գիտէք մի ամիս առաջ յանդիման 18
հայեր բանտարկուեցան մի թրքուհայ համար, որ
հայ երկտասարդի մը հետ փախած է: Նոյնպէս
վերջերս ալ Մշոյ լեռնաբնակ բրդերն կը յարձակն

Հատախի Սեմալ գիւղին վրա՝ հայք կը ստիպուին
ինքնընթերցան պաշտպանել, վերջապէս 4 հայ և 4
քրդ կը սպանուին: Մշոյ կեդրոնական վարչու-
թիւնը բաղձալով դատը որոշել, Միֆթիլին սոյն
անիւստ ֆէթվային *) հետեցաւ, երկու հայ կար-
ծեն մի քրդը. արդ պէտք է երկու քրդի ա-
րեան զինը պահանջել: Անողորմ տանջանքնե-
րով այս տուգանքը վճարել տալէ զինի, զինաթափ
կընէ գիւղը, իրենց կեանքը, ինչքերն ու պատիւը
յափշտակողաց ընդդէմ օրինաւոր պաշտպանու-
թեան ամեն միջոցներէ զրկելով և միւս գիւղե-
րուն օրինակ լինելէ արգելելու համար:

Նիսնապէս Երզրումի մէջ, 1872-ին, կէսօրէն
զինի, լոյս առնել հասարակաց հրապարակին վրա,
բազմութեան առջև կը սպանեն Պատրիստանեան
Խաչատուր Էֆէնդին, որովհետև նորա գործերը
բաւականին ճոխ էին, այս զոճը հարկաւոր էր
և քրիստոնեաները սարսափահար ընելու համար:

Գարձեալ որովհետև վանեցի հայ վաճառականը
վերջին ժամանակներս մի քիչ հարստացած էին,
1876-ին հայոց բնական չուկայն բուրդովին հրոյ
ձարակ տուին. բոլոր պարագայները ցոյց կուտան
թէ այս խորհրդաւոր նպատակաւ պատրաստուած
հարաբերութեան մէջ մի գորատը և ձարտար
մարդ կայ:

Ֆէթվան է ըստ Գուրանի և ըստ չէրի թիւրք
կրօնականներէն զրուած վճիռը:

*) Օրէնքը կը պահանջէ գանել և պատժել բուն
իսկ սպանողները, և ոչ թէ նոյն ընտանիքը և
անմեղ գիւղը:

Վերջապէս այս ամենը պարզապէս ցոյց կու-
տան թէ ամենաարատաւելի միջոցներ 'ի գործ
դրուած են և այսօր ալ 'ի գործ կը դրուին, եթէ
ոչ քրիստոնեաները անհետ ընել, զէթ հարստահարե-
լու համար. հետեւեալ եղելութիւնը ընաւ տարա-
կոյս չը թողուր:

1862-ին խալէբդին փաշան՝ Երզրումի կուսա-
կալը, մեծ վեղիքին հետեւալ տեղեկագիրը կը դը-
կէ:

«Վսեմափայլ տէր, մէկ գիշերուան մէջ Պուլա-
նիի Ղոնճալի գիւղէն աէս խէչօյին 2000 ոչխա-
րը կը մարթեն, հարստահարալ հայք այլ ևս չը
կրնալով համբերել՝ գաղթել կը սպառնան. Հայոց
զաղթիւնը և ներքեւէն երկրին ու արքունի գան-
ձը մեծամեծ վնասներ պիտի կրեն... Ինչպէս է դար-
ժան տանել իրաց այս վիճակին, Երզրումի պահակա-
նոցէն զօրք զրկելով 'ի վնաս, 'ի Մուշ, 'ի Բաղէշ և
ուրիշ տեղեր ընդհանրական ապահովութեան վրա
հսկելու համար, զօրքերը բնակեցնելու է ամրոցնե-
րում, այս կերպով մեծապէս պիտի օգտի արքունի
գանձը, որովհետև զօրաց ուտելիք ածան դնով
և դիւրաւ կը հայթաթուի այս երկրներում և
ասով երկրին ալ կը բարգաւաճի... 4 յունիս 1862-
Մեծ վեղիքը չը պատասխանել, փաշան կրկին կը
զրէ և վերջապէս հետեւալ պատասխանը կընդու-
նի. «Պէտք չէ որ տէրութեան քաղաքականութեան
խառնուիս, և իրենը այդպէս մօտ 'ի մօտդ 'ի
նկատի առնու... Երբի ճանապարհ... երկիրը
Ձէքքէզ պիտի ընակեցնեմ և... 27 սեպտեմ-
բեր»:

Գրեթէ 8 տարի վերջ, քրդերը մի և նոյն աէս

խէչօյին 1000 բարդ խոտը կը վառեն, որպէս զի
ձմեռը տաւարը անթոթութենէ ջարդուի և խէչ-
օյն գերդաստանը, որ օրըստօրէ կը հարստանայ,
կորսնցնէ իւր ազդեցութիւնը:

Արդ երբ գաւառական վարչութիւնը Բ. Գունէն
'ղրուած և անկէ հրահանգուած փաշաներով ու
գաղմագամներով, Հէյնիսպաճէն ընտրուած գա-
ղիներով ու միֆթիլներով այսպէս կը վարուի
քրիստոնէից հետ, երբոր ամենէն յետին ու բար-
ձրատիճան խալամը, պաշտօնեայն և դատաւո-
րը, գործակաւորը և զինուորը, պէն ու չէյիւր,
աղան և ծառայն, և նոյն իսկ օրէնքը ու իւր
տեսուչները իսլամութեան նպատակը 'ի գործ ա-
ծեն, ինչ պէտք է ընէ անդէն և անպաշտպան
հայը, անշուշտ պարտ էր զիմել իւր միակ պաշտ-
պանին, Կ. Պոլսոյ Հայկական Պարիաքարանին *):

Իրաւամբ սկզբէն ի վեր Պատրիաքարանը
թա հ ր ի ռ ն ե ռ օ վ կառավարութիւնէն խողարած
է որ իւր ուղարկութիւնը դարձնէ իրաց այս
ծանր վիճակին վրա. վերջին ատեններս Բ. Գու-
նը, Պատրիաքարանի մշտական թախանձանաց և

*) Քրիստոնէից ներկայութիւնը կառավարութեան
գաւառական ժողովներուն մէջ կը ծառա-
յէր Եւրօպան խաբելու և ոչ ուրիշ բանի,
որովհետև եթէ քրիստոնեայք փորձէին որ և
լիցէ... ընել, յետ այնորիկ պատիմները անձրեկ
շման անոնց գլխուն վրա կիջնէին... այս իրո-
ղութիւնը հաստատող բազմաթիւ օրինակներ կան,
զալով առաջնորդաց, սոքա միայն բողոքելու կա-
րող են, և եթէ քաջաբար դէմ կենան, չնչին պատ-
ճառներով կը պատժուին կամ կը թշնամանուին,
կամ կը բանդարկուին և կամ կը քաղաքանուին...
և... օրինակներ պակաս չեն:

Վաստեց իր ոտքին և մի քանի օր է հիւանդ նըստած է տանը:

«Навразье» լրագրի մէջ կարգում ենք հետեւեալ հեռագիրը կովկասեան սարերից, փետրվարի 13-ից: «Եղանակը պարզ է, խիտ ձիւն է գալիս, քամին չարունակում է: Յօրհոր 5 աստիճան է: Բալխիներն ձանապարհը առայժմ ազատ է»:

«Тихл. Вестн.» լրագրին հաղորդում են, որ եկող շաբթին Ռիֆիկիսի ուսու դերասանական խումբը կը ներկայացնի ուսերեն լեզուով Սոն-դուկեանցի «Պէպո» պիէսան, թարգմանութիւն Օպօլինի: Լրագիրը լսել է որ դերերը այսպէս են բաժանված: Պէպօի դերը, ասում են, կը խաղայ պ. Սարէլսկի, Գիքօ, —պ. Պապ, Կակուլի—պ. Արեւ-նին, Յարութիւն, —պ. Չէրնով, Կէկէլ, —ա. Ալէք-սէկով և այլն:

Խնդրում ենք «Մշակի» օտար քաղաքացի բաժա-նորդներին իրանց հասցէները փոխելու ժամանակ ուղարկել խմբագրութեանը երկու 7 կոպէկանոց փոստի մարկաներ: Եթէ ոչ աղբիւնները չենք փո-խի:

Երէկ, փետրվարի 15-ին հեռագրով ուղարկեցինք Կ. Պոլսի, պ. Կիւլպիշեանի անունով, 2000 ռուբլ յօդու ալանի սովատանջներ: Այդ գու-մարից դեռ հրատարակված չեն Ախալցխայի նուի-րատունների անունները և Ռիֆիկիսի Արծրունու քարվանսարայի վաճառականների անունները, ո-րոնք նոյնպէս նուէրներ են հաւաքել յօդու ալա-նի սովադներ: Այդ գումարից 1000 ռ. տուել է պ. Կարապետ Պոսով ֆոթից, 100 ռ. Տէր-Մի-քայէլեան և իւրերորդը. 277 ռ. զանազան անձինք, 371 ռ. Ախալցխայի բնակիչները և 300 ռ. Արծ-րունու քարվանսարայի վաճառականները (որոնք դարձեալ չարունակում են նուէրները հաւաքել), ուրեմն ընդամենը մինչև այսօր հաւաքվեցաւ 2048 ռ., որոնցից 2000 ռ. մենք ուղարկեցինք, ուրեմն մեզ մօտ մնում է 48 ռ.: Բացի սորանից մեր վերջին անգամ «Արարատեան» ընկերութեանը ու-ղարկած 3000 ռուբլ գումարի մէջ կար 122 ռուբլ յօդու ալանի սովատանջներ: Ուրեմն յօդու ալանի սովատանջների ընդամենը հաւաքվեցաւ մեր խմբագրութեան մէջ մինչև այժմ 2170 ռուբլ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Պրուսական պատգամաւորների ներկայ ժո-ղովում՝ վիճաբանութեան առարկայ է դար-ձել զաւանթութիւնների միմիկարութեան բիւզ-ժէտը: Այս հարցը արդէն քանի անգամ է որ վիճաբանութեան է ենթարկվել, բայց մինչև այժմ դեռ մի որոշ եզրակացութեան չէ հասած: Դաւանութիւնների միմիկար Պուտտկամեր, պատասխանելով պ. Կլոտցի ա-ռաջարկութեանը, ասաց, որ կառավարու-թիւնը մտադիր է գործադրել մայիսի օրէնք-ները մշտապէս:

Հռետորների բոլոր ծարտարախօսութիւնները, վիճաբանութիւններն ու հակաձառութիւն-ները դեռ մինչև այժմ չը կարողացան լոյս զոյգել Գերմանիայի և Վատիկանի մէջ ունեցած յարաբերութիւններն իրաւ, ուրեմն չը նայե-լով երկրի ներկայացուցիչների բոլոր ջանքե-րին, այնու ամենայնիւ գործի մէջ միշտ մի մուծ կողմ է մնում, որի թիւերը կառավա-րութեան ձեռքերում պէտք է որոնել:

Մայիսի յետադիմական խիստ օրէնքները մշտապէս են գործադրվում, միայն այն միւր-թարական յոյսով, որ նրանց գործադրութիւնն այժմ համեմատաբար աւելի մեղմ կը լինի քանի թէ պ. Ֆայլի միմիկարութեան օրովը —եթէ մեղմ էլ չը լինի, զոնէ խոստանում են այդպէս անել:

Գերմանական մի լրագիր պատմում է, որ Բերլինից դէպի Կէօնիգսբերգ տանող ձանա-

պարհի վրա կրակ յայտնվեցաւ այն գնացքի վազոններից մէկում, որ տաքացրած էր շ-գիով, և որ տանում էր ուսաց Կայսրու-հուն դէպի Ս. Պետերբուրգ: Գնացքը կանգ-նեցրին մօտ տասնհինգ րօպէ, և այդ ժամա-նակամիջոցում յաջողացրին հանգցնել կրակը:

Գերմանական մի քանի լրագիրներ լուր էին տարածել, որ Բերլինի Ֆրանսիական դեսպան Սէն-Վալլիէ հրաժարական է ներկայացրել, և այդ լուրը արտասոված էր Ֆրանսիական մի քանի կիսապաշտօնական թերթերում: Այդ իրողութիւնն արդէն ամենքի հա-մար հաւանականութիւն էր ստացել, երբ պ. Սէն-Վալլիէ պաշտօնապէս յայտնեց իր կա-ռավարութեանը, որ այդ լուրերը նրա ցան-կութեան համաձայն չեն տարածված, հե-տեաքար և նա մնում է իր պաշտօնի մէջ: Այս առիթով «National Zeitung» լրագիրը յայտնում է, որ Սէն-Վալլիէի տեղը հաս-տատ մնալը ապացոյց է, որ Ֆրանսիական կառավարութիւնը համակրում է այն քաղա-քականութեանը, որ դեսպանը մինչև այժմ ներկայացնում էր գերմանական կառավարու-թեանը:

Բացի այս, նոյն գերմանական լրագիրն ա-ւելացնում է հետեւեալը. «Մենք զգում ենք, որ այս գործը նշան է գերմանական և Ֆը-րանսիական կառավարութիւնների բարեկա-մական յարաբերութիւնների շարունակու-թեանը»:

Գերմանական մամուլը սաստիկ թշնամա-բար է վերաբերվում դէպի Գերմանիայի դէմ զրկած մի յօդուածը, որ տպված է «Times» լրագրի անցեալ համարներից մէկում: «National Zeit.» լրագիրը բաղդաւոր է համարում ի-րան կարծել, որ անգլիական մամուլը համա-ձայն չէ այդ յօդուածի յայտնած մտքերին, և թէ դա միայն մի մասնաւոր անհատի կար-ծիք է:

Անցեալ օրերս Ելզաս-Լոտարինգիայի պատ-գամաւորութիւնը մի ձեռն ձաշ տուեց երկրի կառավարչին և միմիկարութեան անդամնե-րին:

Մարշալ Մանտեօֆֆէլ պատգամաւորու-թեան նախագահի օտոտին պատասխանելով, ասաց հետեւեալ խօսքերը.

«Ճորհակալ եմ ձեզին, պ. նախագահ, այն գեղեցիկ խօսքերի համար, որ դուք ար-տասանեցիք, ես խմում եմ պատգամաւորու-թեան անդամների կենացը—բոլոր նրա ան-դամների, ներկայ թէ բացակայ,—որովհե-տե ես նուիրում եմ իմ օտոտը ամբողջ Ել-զաս-Լոտարինգիային: Սրբ դուք ձեզ հան-գիստ կը դրաք, պարոններ, դուք կարող էք կատարեալ աղատութեամբ թարգման հան-դիսանալ երկրի ցանկութիւններին, և աղատ զգացմունքներով ու ձեզ արժանի անկա-խութեան ոգով կատարել ձեր բարձր կոչումը: Սրանով դուք կարող էք ծառայել երկրի շա-հերին, և ես խմում եմ պատգամաւորու-թեան անդամների կենացը»:

Սակսոնիայի ազնուականների ժողովում ըն-դունվեցաւ այն առաջարկութիւնը, որը պէտք է ներկայացնել զաշնակցական խորհրդարանին, որպէս զի մի օրէնք հրատարակվի, որի գորու-թեամբ կարելի լինէր ոչնչացնել վաշխառու-թիւնը:

Շուտով Բալթիկայի պատգամաւորների ժո-ղովը կը զբաղվի զօրքի աւելացնելու ծրա-գրի վիճաբանութիւններով. կարծում են, որ վիճաբանութիւնները սաստիկ հետաքրքիր, հետեւաբար և սաստիկ աղմկայի կը լինեն: Պատգամաւորներից մէկը — պ. Դալլէ մի ա-ռաջարկութիւն է ներկայացրել կառավարու-թեանը, որով նա հրաւիրում է բալթիական կառավարութեանը ներկայացնել այդ հարցի քննութիւնը զաշնակցական ժողովին:

Յաջորդ նիստերից մէկում կը քննվի այդ հարցը:

Պետութեան տարեկան բիւզժէտը ներկա-յացված է զաշնակցական ժողովին. մուտքը

և ծախսը միասին հաշված, հաւասարում է 544,888,184 մարկի:

Պետութեան սովորական ծախսը հաւա-սարում է 467,409,487 մարկի, իսկ անցեալ տարի միայն ծախսը հասել է 77,478,697 մարկի:

ԻՏԱԼԻԱ

Յայտնում են, թէ կառավարութիւնը հաս-տատ որոշել է երկու նոր միմիկարութիւն-ներ կազմել. մէկը զանաքանի համար, իսկ միւսը փոստային, երկաթուղիների և հե-ռագրական վարչութիւնների համար:

Լրագիրները յայտնում են, որ վերջին օ-րերս Փարիզից մի զբօսաւոր գնացք (train de plaisir) հասաւ Հռոմ: Ֆրանսիական ամբողջ զաղթականութիւնը, հաղթաւոր ուրիշ մար-դիկ, ինչպէս և մի քանի երաժշտական խում-բեր գնացին երկաթուղու կայարանը, և «Կե-ցէ» Խալիլա, կեցցէ՝ Ֆրանսիա՝ արտադնելով ընդունեցին ձանապարհորդներին:

«Italia» լրագիրը հաղորդում է, որ զվիցե-րական կառավարութիւնը պատրաստութիւն-ներ է տեսնում, որպէս զի զալ ամառը փոստա-յին ծանրութիւնները Խալիլա փոխադրու-համար Սէնթժորժեան օտոնէլով անց-կայնէ:

Այսպէսով Սէնթժորժեան ձանապարհը մինչև անգամ երկաթուղու շինվելուց առաջ էլ աւելի յարմարութիւններ կունենայ եր-թեկութիւնների համար, քան թէ Սօնա-նեան ձանապարհը:

Այս վիթխարի տունէլը, որ այսքան ժա-մանակէ ի վեր այնքան բազմաթիւ աշխա-տող բազմակնով անդադար փորվում է, դեռ չէ վերջացել: Ասում են, որ իրան Իտալիայի և Զուիցերիայի երկու կողմից փորող մշակ-ները այնքան մօտեցել են միմեանց, որ նրանք արդէն փոխադարձաբար լսում են միմեանց աշխատութիւնների ձայնը, ուրեմն մի քանի շաբթիներից, թերեւ և մի քանի օրից յե-տոյ, նրանք արդէն միմեանց ձեռք կը սեղ-մեն, և աշխարհը ուրախանալով կօրհնէ նը-րանց աշխատանքը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՌԵՐ

«Daily News» լրագրի Կ. Պոլսի սեփական թըզ-թախիցը հեռագրում է, փետրվարի 8-ից, Սիրիայի վրայով հետեւեալ. «Երէկ ու ժ ու լ ը ն ա լ ի ս տ ն ե-ր ը ն ես, որոնք բանտարկված էին Հայաս-տանի մէջ կատարվող բարբարոսութիւնները ի-րանց լրագրի մէջ նկարագրելու պատճառով, վեր-ջապէս աղատութիւն ստացան, Հայոց պատ-րիարքի բողոքից յետոյ: Կառավարութեանը արգելեց հայ լրագիրներին Հայաստանի մէջ կա-տարվող բարբարոսութիւնների վերաբերութեամբ մի որ և իցէ բան տպագրել»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր կատարվեցաւ Փարիզում, փետրվարի 10-ին վախճանված սենատոր Իսա հակ-Ա-դօլֆ Կրէմիէի թաղման հանգիստը, որը իր հայրենիքի ամենանշանաւոր փաստարաններից մէկն էր: Կրէմիէ ծնվեցաւ 1796 թւի ապրիլի 30-ին, Նիմուս, հրէայ ծնողներից, և իրաւաբանութեանը ուսումնասիրեց Էքսում, ուր, 1817 թւին, փա-տարան դարձաւ և նշանաւոր եղաւ իր ընդունա-կութեամբ զանազան քաղաքական դատեր պաշտպանելու մէջ: 1830 թւին Փարիզի կասա-ցիօնական դատարանի փաստաբան նշանակվելով, նա շուտով մեծ անուն հանեց, որպէս զլիսաւոր պաշտպան ընդդիմադրական մի քանի գործերի և դէմակրօնների: 1842 թւին Կրէմիէ պատգամա-ւորների ժողովի անդամ ընտրվեցաւ, որպէս Շի-

նիօնի ներկայացուցիչ, և 1846 թւին նա նորից ընտրվեց: 1848 թւի փետրվարի յեղափոխութենից յետոյ, նա ժամանակաւոր կառավարութեան ան-դամ դարձաւ և յանձն առաւ արդարադատութեան միմիկարութեան կառավարութիւնը: Յետոյ նա օգնում էր իշխան Լուի-Նապօլէօնի կանդիդատու-րային, բայց երբ նա Ֆրանսիայի նախագահ ընտր-վեցաւ, Կրէմիէ հակառակ կուսակցութեան հետ միացաւ և դարձաւ ընդդիմադրական կուսակցու-թեան ամենանշանաւոր հետեւորդներից մէկը: 1851 թւի փետրվարի 2-ի պետական յեղափոխութենից յետոյ, նա քաղաքականութեանը հետացաւ և միայն դատաստանական պրակտիկայով էր պարպում: Երկրորդ կայսերութեան անկումը կրկին կանչեց նրան դէպի քաղաքական ասպարէզը, և նա կրկին արդարադատութեան միմիկարի պաշտօնը ընդու-նեց, և 1870 թւի սեպտեմբերի 12-ին նրան Տուր ուղարկեցին իւրաքանչիւր միմիկարութեանը ուղար-կած պատգամաւորի հետ միասին թշնամուց չը դրա-ւած նահանգները կառավարելու համար: Այս կառա-վարչութեան ամենանշանաւոր գործերն եղան Ալ-ժիրիան երեք դեպարտամէնտների վրա բաժանելը Կրէմիէի առաջարկութեամբ, և Ալժիրիայի հրէա-ներին Ֆրանսիական քաղաքացիութեան իրաւունք տալը: Երբ, խաղաղութիւնը կապելուց յետոյ, ազ-գային ստորագրութիւն բացվեցաւ, Ֆրանսիան թշնամու դրաւումից շատ չուտ ազատելու համար, Ազօֆ Կրէմիէն մեծահոգութեամբ իր բոլոր մեծ կարողութիւնը տուեց հայրենիքի ազատութեան համար: 1871 թւի փետրվարից նա Ալժիրիայի կողմից պատգամաւոր էր Ազգային ժողովում, որը, 1875 թւին, ընտրեց նրան ապագայ սենատի ցմահ անդամ: «Alliance Israelite universelle» անուանված հրէական ընկերութեան հիմնադիր և նախագահ լինելով, նա իր հաւատակիցների քա-ղաքական և սոցիալական ազատութեան ամենա-ժիր և առաջնակարգ պաշտպաններիցն էր:

Լօնդոնից «Indépendance Belge» լրագրին փե-տրվարի 8-ից հեռագրում են հետեւեալ. «Մարկիզ Սալիբուրիի հիւանդութիւնը առաւել ևս սասա-կացաւ: Նա տիֆային հիւանդութեան մի սաս-տիկ տեսակովն է վարակված»:

«Fremdenblatt» լրագիրը հաղորդում է որ Վի-էնիայի պօլիցիան, փետրվարի 7-ին, կառնաւորեց սօցիալիստ Պրադէրին, որը Լօնդոնի սօցիալիստ-ների մասնաժողովի հրատարակած յեղափոխական բրօշխներն էր տարածում: Պրադէր ամեն բան խոստովանվեց և նրան կը դատեն պետութեան դէմ դաւաճանութեան համար:

Լօնդոնի «Daily News» լրագրին Նեպոլից հե-ռագրում են հետեւեալ. «Անցեալ գիշեր Վէզով հրաբուխը գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Լաւայի նոր հեղեղները հոսում էին հիւսիսա-ա-րևմտեան ուղղութեամբ, Հրաբուխի բերանը կօ-նուսի ձև ունէր, որ պայծառ կարմիր գոյնով էր լոյս տալիս»:

Լօնդոնից հաղորդում են լրագիրներին, փետր-վարի 10-ից, որ զլիսաւոր թատրոնը Գուրլենում ամբողջապէս մոխիր դարձաւ: Կարծում են, որ հրդեհի ժամանակ վեց մարդիկ են այրվել:

«ՄԵՍԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս.ՊԵՏԵՐԲՈՐԳԻ, 14 փետրվարի: Փետրվա-րի 6-ից մինչև 12-ի կառավարական բիւլ-լետէն. Այս շաբաթվայ ընթացքում Կայս-րուհու առողջութիւնը զգալիորէն բարձաւ: Կարծում են, որ հրդեհի ժամանակ վեց մարդիկ են այրվել:

«С. Петербургскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ բարձրագոյն խորհուրդ է կայանում, որին կենթարկվեն բոլոր գեներալ-նահանգապետութիւնները: Նախագահ է նը-շանակվում Լօրիս-Մէլքօւ, որը երէկ պետա-կան խորհուրդի անդամ նշանակվեցաւ: Գուր-կօ հեռանում է ժամանակաւոր գեներալ-նա-հանգապետութեան պաշտօնից և Պետերբուր-գի շրջանի զվարդիական գործերի հրամանա-տարի օգնական է մնում: Տրէպօւլ նշանակվում է Ս. Պետերբուրգի կամենդանո, Ջմերային Պայատի մէջ ծառայողների վրա հսկելու ի-րաւունքով:

Կ. ՊՈԼԻՍ, 12 փետրվարի: Պօլիցիան գտաւ Պապադօպուլոս անունով մէկի մօտ առմէրը և դժոխային մեքենայ, վերոյիշեալ անձը յայտնեց, որ նա Անգլիայի հղանաւորութեան տակ է գտնվում: Կասկածում են, որ սուլթանի կենքի դէմ դաւադրութիւն կար:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Դրամաճառանոցում հետևեալ գրքերը:

Table with 2 columns: Book title and Price. Includes titles like 'Մանկական երգեր Գամառ-Քաթիպայի, կաղամած', 'Փառամաղ մեղու պատկերազարդ, կաղամած թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի', etc.

Table with 2 columns: Book title and Price. Includes titles like 'Հրատարակութիւն Զարմայր Մսերեանի', 'Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս', etc.

Table with 2 columns: Book title and Price. Includes titles like 'Վեյքի իմ վեշեր, Ֆարս երեք պատկերով Մ. Տ. Գ.', 'Բերքեր բնիւ հանաքը. Օպերետա մի գործողութեամբ', etc.

Վերադառնալով 27-ից սկսած, Գուշիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բաղադանի մէջ կը ներկայացնուի Հասարակութեանը երբեք այստեղ չը տեսնված երեւոյթ, այն է ԵՐՐՕՊԵՅԻ ԵՌԵՎԱՆԻ ՀԱՍԿԵՅ ՕՐԻՈՐԴ ԱՍԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻԿՆԵՐ ՄԵՐԿԻՑ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻ և ՄԵՐԿԻՑՈՒՀԻ ԼՈՒԻՅԷ ՏԵՂԵՐԻ գնեցէ՛ք առաջին տեղեր 50 կօպէկ, երկրորդ 30 կօպէկ: Երեւանները կէսն են վճարում:



30 կօպէկ: Երեւանները կէսն են վճարում:

Въ пятницу, 15-го февраля Въ Тифлискомъ Собраніи имѣть бытъ МАСКАРАДНЫЙ БАЛЪ на усиленіе средствъ школы и дѣтскаго пріюта Тифлискаго Благотворительнаго Общества. Начало маскарада въ 10 часовъ вечера, конецъ въ 4. Маски обязательны до конца маскарада. Цѣна билетамъ въ залѣ: для кавалеровъ 2 р., для дамъ 1 р.; на хоры 3 р. Билеты будутъ продаваться у швейцара Собранія.

ԲԵՐԼԻՆԻ աղաքեմիայի Ինտենսիվ Կ. Կ. Կե-լնիզ ՊԱՏԱՍՏԱՆՄ Է ամեն տեսակ ՊԱՆՆԵՐ և զանազան ՇԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ Է անձն առնում: Հասցեն Վարանդուկյայ Նաբերեժնայա, № 4, ՎԵՐԻՆ ՅԱՐԿՈՒՄ:

ՄԻ ՕՐԻՈՐԴ ՎԱՐՁՈՒՀԻ, որ ուսուցչուհու ՎԿԱՅԱԿԱՆ ունի, ՆՈՐ Է ԵԼԻԷ ՓԱՐԶԻՆ և Հիմնադրապետ իմանում է ՌՈՒՍԵՐԵՆ, ՖԵՐԱՆՍԻԵՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ և ԻՏԱԼԻԵՐԵՆ լեզուները, նոյնպէս ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ և ԵՐԿԵՑՈՒԹԻՒՆ. փնտռում է ԳԱՍԵՐ կամ վարժուհու ՊԱՇՏՈՆ: Հասցեն. Առաքանակայա փողոց, ԶՈՒՐԱՎՈՎԻ ՏՈՒՆ, առաջին յարկում Սեմինարիայի հանդէպ, Բրոքսիւն բնակարանում:

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

“ԿԱՅԾԵՐ”

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակու թիւն ԲԱՅՅԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված էրեսներ: Ըմեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳՆԻՆՈՒՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ թԻՖԼԻՍՈՒՄ պէտք է գիմել «ՄԵՂԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԵԼԻՔ-ՅԱՆՈՒՆԵՐԻՆ:

ՀԱՇՏԱՐԱՐ դատարանի 4 բաժնի դատաստանական ՊՐԻՍԱՎ ՎԱՍԻԼԵՆԿՈ քաղաքային օրէնսդրութեան 1030 յօդուածի համեմատ յայտնում է, որ ՓԵՏՎԱՐԻ 16-ին առաւօտեան 10 ժամին, Երեւանեան հրապարակի վրա, Փամաշեվի քարվասարայի մօտ, պօլիցիական վարչութեան հանդէպ ԱՃՈՒՐԴՈՎ ԿԸ ՇԱՍԼԻ ԱՅՐԻ ԷՓԵՄԻԱ ՄԱՅԻՍՈՒՐՈՎ Ի շարժական ԿԱՅՔԸ, որ բաղկացած է զանազան կահ կարասիներից, պահարաններից, բուքէտից և այլն և որ գնահատված է 148 ր.: ԱՅՐԻ ՄԱՅԻՍՈՒՐՈՎԻ կայքը ծախվում է Ստեպան Պամաշեվի 1880 թ. ՊԱՏՏԻ և 1876 թուի սեպտեմբերի 14-ից սկսած պարտքի 80400Ի և դատաստանական ծախս 120 ր. ՁԸ ՎԱՍԻԼԵՆԿՈՒ ՀԱՄԱՐ:

- 1. Երգն կեանց բաժանայ—Մանկական երգարան, երգեր և պարերգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում: գինն է . . . — ր. 20 կ.
2. Մեծատունեանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Դիժտերիտ բողազացաւ . . . — ր. 25 կ.
4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանց—Վասրակիչ հիւանդութիւններ. (Մաղիկ, կարմրուկ, սկարլատին, բժաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիա, ընդհատ տենդ, խոլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ) Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ:

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍՅՑ ԲԱՋԱՐԻ Է ՀԱՒԱՐԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌԵՏԻԱԿԱՆ ՇԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ուստաց բաղարի վրա 18 համարներ և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել 8ԱՆԿԱՅՈՂՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍՆԵԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՅՄԱՆԵՐԸ կը յայտնվեն:

С. ПЕТЕРБУРСКІЙ ПОРТНОЙ ГЕРМАНЪ ОБРАТИТЕ ВНИМАНИЕ Имѣю честь извѣстить почтеннѣйшую публику, что нынѣ мой магазинъ и мастерская находятся на Гановской улицѣ на противъ дома Хосроева, въ новомъ устройствѣ Шахъ-Назарова, только что получено большой выборъ осенней и лѣтней Англійской и Французской матеріи и также принимаются заказы военныхъ и гражданскихъ костюмовъ по умѣреннымъ цѣнамъ.

Մանուկ բարձրագույն աղբիւրց յետ, նորից բացված է խտակ մոմի առևտուր Միսեան փողոցում Երթրունու բարձրագույն յումը № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խտակ մոմեր իմ սեփական զաւթից և որոնք վաճառվում են էժան գնեւրով. խնդրեմ գնողներին չը թողնել իրենց այցելութիւնները:

Փետրվարի 12-ից ԿԸ ԲԱՅՂԻ Իշխան ՍՈՒՐ. ԲԱՏՈՎԻ տանը ԿՕՆԴԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (печарня) մազալին «ВАРШАВСКАЯ ПЕКАР-НЯ» վերագործը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմոր և դէննեք, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտնեք արժան գնով. թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են գիմել հետեւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОЙ ПЕКАРНИ Мартыроу Ахназарову. Պատուէրները կը կատարվին պմնայն ճշգրտութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեղ վրա առնելով: Կօնֆէտնեքի գինը ֆունտը 40 կօպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ուսումն և ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱՍԻԱՆԵՐԻՑ միւր մէջ, ցանկանում է վարժուհու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՌԻՍՈՒՄԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում և զարկել հետեւեալ հասցէիւ. С. Петербургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Иоану.